



DIocese OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

Archbishop Khajag Barsamian, Primate



Թի 1560
Դեկտեմբեր 10, 1993

Արժանաշնորհ
Տ. Գարեգին Քհնյ. Գասպարեան
Հովի Ս. Յակոբ Եկեղեցոյ
Փըրշէյս.

Սիրելի Տէր Գարեգին,

Սրբոց Վարդանանց տօնին առթիւ՝ Երեքշաբթի Փետրուար 10-ի (1994) երեկոյեան Առաջնորդարանիս Հայկ եւ Այիս Գավուքճեան հանդիսասրահին մէջ տեղի պիտի ունենայ մասնաւոր ճաշկերոյթ եւ պիտի գործադրուի օրուան պատշաճ յայտագիր մը:

Յայտագիրին իր մասնակցութիւնը պիտի բերէ Ս. Վարդան Մայր Տաճարի եւ շրջանի Հայ Եկեղեցիներու դպրաց դասերու անդամներէն կազմուած երգչախումբը՝ ղեկավարութեամբ խմբավար Խորեն Մէլիսանէճեանի:

Այս գրութեամբ կը հրաւիրենք Եկեղեցոյդ դպրաց դասի անդամները՝ որպէս զի իրենց մասնակցութիւնը բերեն մեր ազգային այս գլխաւոր տօնի յիշատակումին: Խմբավար Խորեն Մէլիսանէճեան պատրաստ է Յունուար ամսուան ընթացքին այցելել ձեր համայնքը եւ կատարել փորձերը դպրաց դասի անդամներուն հետ:

Բարի եղէք Եկեղեցոյդ դպրապետին տեղեկացնել այս պարագան եւ փորձերու համար ընտրել այն օրերը՝ որոնք յարմար են բոլորին: Տիար Մէլիսանէճեան ձեզի հետ հաղորդակցութեան մէջ պիտի մտնէ՝ ընելու համար անհրաժեշտ կարգադրութիւնները:

Սիրոյ ողջունի

ԽԱԺԱԿ ԱՐԲ. ՊԱՐՍԱՄԵԱՆ
Առաջնորդ